

**ՀՀ ֆինանսների նախարարություն  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/4**

**15 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց «Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ 17.06.2014 թ-ի թիվ 01/14 գրությամբ բերված գանգատը 2013 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

**«Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.**

«Սի էֆ էֆ Սերվիսիս» ՓԲԸ-ի 2013 թ-ի նոյեմբերի 21-ի թիվ հ-05/13 գրությամբ առարկություններ էին ներկայացվել ընկերության նկատմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոն ՀՏ կողմից կազմված երկու փաստաթղթի վերաբերյալ.

1) 05.10.2013 թ-ի կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ արձանագրությանը,

2) 24.10.2013 թ-ի հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավել վճարված գումարների (գերավճարների) հիմնավորվածության ուսումնասիրության թիվ 2217320 արձանագրության:

Ի պատասխան վերոհիշյալ գրության, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 27.12.2013 թ-ի թիվ 62/2 որոշմամբ բերված բողոքը բավարարվել է:

Հաշվի առնելով վերոհիշյալ նախադեպը, «Սի էֆ էֆ Սերվիսիս» ՓԲԸ-ի հետ մեկտեղ «Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ-ի և «Էյջ Փրոփրթի» ՓԲԸ-ի նույն կարգավիճակում գտնվելու հանգամանքը, որոնց բաժնետոմսերի 100% նույնպես պատկանում են ԱՄՆ իրավաբանական անձ Գաֆեսնեյան Ընտանիքի Հիմնադրամ, Ինք.-ին (գրանցված ԱՄՆ Ֆլորիդա նահանգի պետական դեպարտամենտի կողմից 27.12.1996 թ-ին), ինչպես նաև «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից ընկերության նկատմամբ կազմված վարչական ակտերը և անփոփոխ թողնել ընկերության 2013 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարողի կարգավիճակը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ կողմից ներկայացվել է հայտարարություն «Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին»: Նշված հայտարարության ներկայացմամբ «Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ-ն 01.01.2013 թ-ից իրեն համարել է ԱԱՀ վճարող, ինչը, սակայն, չի ընդունվել Կենտրոնի ՀՏ կողմից, քանի որ ԱԱՀ վճարող համարվելու համար ընկերության կողմից պետք է ներկայացվեր հայտարարություն «ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ»:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել

շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմինն ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո ղ ո շ ու մ է՝**

«Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ 17.06.2014 թ-ի թիվ 01/14 գրությամբ բերված գանգատը բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**